ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

24 հունիսի 2014թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ: Նիստին հրավիրվել էին նաև ամբիոնների

դասախսներ, աշխատակիցներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2013-14թթ. ուս. տարվա II կիսամյակի քննաշրջանի ամփոփում:*

/զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

2. *Կրթական գործունեության ինքնագնահատում և ինքնավերլուծություն:*

/զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ըստ կուրսերի ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի քննաշրջանի արդյունքները, նշելով, որ քննաշրջանը անց է կացվել հաստատված ժամանակացույցի համաձայն: Քննաշրջանի արդյունքներով հեռացման ենթակա և քննաշրջանին չներկայացած ուսանող չկա /առաջադիմությունը կցվում է արձանագրության տեքստին/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ա. Զաքարյանը և ուրիշներ: Նրանք ընդգծեցին, որ քննաշրջանը անց է կացվել կազմակերպված բացթողումներ և թերացումներ չեն նկատվել:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի I լուծարքային շրջանը անցկացնել 02-12.09.2014թ.:

2.Հանձնարարել ամբիոններին նշված ժամանակահատվածում կազմակերպել լրացուցիչ կոնսուլտացիաներ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց ուսումնական տարվա կրթական գործունեության ինքնագնահատումը և ինքնավերլուծությունը. ըստ ուսումնական տարվա հաստատված ժամանակացույցի իրականացվել են բոլոր պահանջները. դասաժամերի բացթողում չի գրանցվել, կրճատվել են ուսանողների կողմից անհարգելի բացակայությունները: Ֆակուլտետի ուսումնական գործընթացի մասին բազմիցս քննարկվել են նախորդ նիստերում: Աշխատանքների կատարումը և վերահսկողությունը իրականցվել է ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների համատեղ աշխատանքի շնորհիվ:

Ամփոփելով միտքը զեկուցողը իր գոհունակությունը հայտնեց նաև ֆակուլտետի դասախոսների և աշխատակիցների բարեխիղճ աշխատանքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Մ. Ա. Զաքարյանը, Գ. Վ. Գուլակյանը, Գասպարյանը և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել դեկանատին և ամբիոններին շարունակել կազմակերպելու կրթական գործունեությունը ըստ ուսումնական գործառույթների:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**